Ժ. Մ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

Գ. Դ. ԽԱԽԱՆՅԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Կարմիր բանակը հաղթանակով դուրս եկավ քաղաքացիական կռիվներից։ «Սա վիթխարի հաղթանակ է,— նշել է Վ. Ի. Լենինը,— որին առաջ մեղանից ոչ մեկը չէր հավատում»[1]։

Պատմական այդպիսի հաղթանակն ապահովվեց առաջին հերթին սովետական զորամասերի համառ ու հերոսական պայքարի շնորհիվ։ Սովետական Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների արժանավոր զավակները անձնուրաց կերպով կռվեցին ներքին և արտաքին թշնամիների դեմ, մեկ անգամ ևս ապացուցելով իրենց անսահման նվիրվածությունը հարազատ հայրենիքին ու ժողովրդին։ Կարմիրբանակայինները, հրամանատարներն ու քաղաշխատողները դիմացան ամեն տեսակ զրկանքների ու դժվարությունների, անհավասար մարտեր մղեցին իմպերիալիստական տերությունների կողմից մատակարարվող Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, Վրանգելի, բուրժուա-կալվածատիրական Լեհաստանի ու մյուս բանակների դեմ և կրծքով պաշտպանեցին Հոկտեմբերյան հեղափոխության մեծ նվաճումները։

Կարմիր բանակի շարքերում մյուս ազգերի հետ կողք-կողքի անձնուրաց կերպով էին պայքարում նաև հայ ժողովրդի զավակները, որոնք իրենց սխրագործություններով հերոսական շատ էջեր գրեցին քաղաքացիական կռիվների պատմության մեջ։ Նորաստեղծ կարմիր բանակի շարքերում աճեցին բազմաթիվ հայ հրամանատարներ ու քաղաքական աշխատողներ, որոնք իրենց արժանի ներդրումն ունեցան Սովետական Ռուսաստանի և մյուս հանրապետությունների պաշտպանության գործում։

Նրանցից մեկն է Գրիգոր Դավթի Խախանյանը։

Այսօր էլ, Մոսկվայում՝ սովետական բանակի Կենտրոնական պետական արխիվում փակցված է պատվո տախտակ՝ «Ոսկյա ղենքի կավալերներ» վերտառությամբ, որտեղ մյուս հերոսների թվում կարելի է տեսնել կարմիր բանակի ականավոր զորահրամանատար, քաղաքացիական կռիվների անվանի հերոս, հայ ժողովրդի պանծալի զավակ Գ. Դ. Խախանյանի դիմանկարը։

Գ. Դ. Խախանյանը ծնվել է 1895 թ., Գորիի շրջանի Ռուիսի գյուղում։ Դեռ պատանի հասակում նա ներգրավվում է հեղափոխական շարժումների հորձանուտը, իսկ այնուհետև դառնում պրոֆեսիոնալ հեղափոխական։ 1915 թ. նա ընդունվում է Մոսկվայի համալսարանի բանասիրական ֆակուլտետը և հեղափոխական լայն աշխատանք է կատարում ուսանողության շրջանում։ Գ. Խախանյանը, որպես բոլշևիկ դեպուտատ մասնակցում է սովետների 2-րդ համառուսաստանյան համագումարի աշխատանքներին։

1918 թվականին, երբ մահացու վտանգ էր կախվել նորաստեղծ սովետա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 496։

կան պետության գլխին, Գ. Խախանյանը նոր կազմավորվող կարմիր բանակի առաջին շինարարներից մեկն էր։

1918—21 թթ. նա եղել է Պսկովյան հրաձգային դիվիզիայի զինկոմ, Սվիյաժսկ քաղաքի պաշտպանության պետ, 5-րդ բանակի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, բրիգադի հրամանատար և 27-րդ դիվիզիայի հրամանատարի տեղակալ։

1919 թ. ամռանը Դենիկինի դեմ պայքարին զուգընթաց, Վ. Ի. Լենինի ցուցումով, սովետական զորամասերի հարձակումը շարունակվում էր նաև Արևելյան ռազմաճակատում։ Նշելով Կոլչակին վերջնականապես ջախջախելու անհրաժեշտության մասին, Վ. Ի. Լենինը 1919 թ. մայիսի 29-ին գրում էր. «եթե մենք մինչև ձմեռ չգրավենք Ուրալը, ապա ես հեղափոխության կործանումն անխուսափելի եմ համարում»[2]։

Շարունակելով հարձակումը Արևելյան ռազմաճակատում, սովետական զորամասերն անցնում են Բելայա գետը և հունիսի 9-ին ազատագրում Ուֆա քաղաքը։ 5-րդ և Թուրքեստանյան բանակները ջախջախում են գեներալ Խանժինի ընտիր զորամասերը Ուֆայի շրջանում։

Այդ, ինչպես նաև Կոլչակի դեմ մղվող հետագա մարտերում, ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Գրիգոր Խախանյանի գլխավորած բրիգադը։

1919 թ. ամռանը Գ. Խախանյանը 5-րդ բանակի 27-րդ դիվիզիայի 3-րդ բրիգադի հրամանատարն էր։ Նրա բրիգադը մտնում էր Կոլչակի դեմ գործող հատուկ հարվածող խմբի մեջ։ Հակառակորդը ուժեղ պաշտպանություն էր ստեղծել Ուֆա գետի ափին։ Գետանցի ժամանակ Գ. Խախանյանի բրիգադը իր վրա հրավիրեց հակառակորդի ուժերի զգալի մասի ուշադրությունը և դրանով հնարավորություն ստեղծեց մյուս զորամասերի հաջող անցման համար։ «27-րդ դիվիզիայում, մարտի ամբողջ ծանրությունը գետանցի շրջանում,— պատմում է մարտի մասնակից Ն. Կրասնոպոլսկին իր հուշերում,— ընկավ 3-րդ բրիգադի վրա, որը հունիսի 27-ին Ուրազբախտի գյուղի մոտ անցավ Ուֆա գետը, որտեղ հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս»[3]։ Անցնելով Ուֆա գետը, 3-րդ բրիգադը 2-րդ բրիգադի հետ մեկտեղ, մեկը մյուսի հետևից ազատագրում էր նորանոր տերիտորիաներ։ 1919 թ. հունիսի 28-ին 5-րդ բանակի շտաբի զեկուցագրերից մեկում ասված է. «2-րդ և 3-րդ բրիգադների զորամասերը հաջողությամբ անցան Ուֆա գետը և առաջ են շարժվում, ոչնչացնելով հակառակորդի առաջատար ուժերը»[4]։

Հունիսի վերջերին Կաիրովո գյուղի մոտ տեղի ունեցած ահեղ ճակատամարտում 3-րդ բրիգադի մարտիկները 8 ժամյա արյունալի մարտ էին մղում կոլչակյան զորամասերի դեմ։ Բրիգադի 241-րդ և 243-րդ գնդերը մի քանի անգամ անցան հակագրոհի և հաղթահարելով հակառակորդի կողմից վաղօրոք կառուցված ամրությունները, ջախջախեցին նրան և ձեռք բերեցին մեծ քանակությամբ ռազմավար[5]։ 27-րդ դիվիզիայի հրամանատարի հունիսի 30-ին

---

2 Վ. Ի. Լենին, Ռազմական դրագրություն (1917—20), Հայպետհրատ, Երևան, 1944, էջ 88։

3 П. Краснопольский, В боях за освобождение Челябинска, газетно-журнальное изд-во, «Челябинский рабочий», Челябинск, 1959 г., стр. 11.

4 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 169, թ. 3։

5 Տե՛ս ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 169, թ. 1։

տված զեկուցագրում ասվում էր. «3-րդ բրիգադի տեղամասում հակառակորդը շարունակում է նահանջել դեպի արևելք»[6]։

Թշնամին ուժեղ դիմադրություն ցույց տվեց, հատկապես, Տաստուբա գյուղի մոտ, որտեղ նա մեծ ուժեր էր կենտրոնացրել։ 27-րդ դիվիզիայի 2-րդ և 3-րդ բրիգադների դեմ թշնամին կենտրոնացրել էր իր ուրալյան 7-րդ ընտիր դիվիզիան[7]։ Սակայն Գ. Խախանյանի բրիգադի և մյուս զորամասերի շեշտակի հարվածներից հակառակորդի գնդերը վերջնականապես կորցնում են իրենց մարտունակությունը։ Գերի ընկած սպաները վկայում են, որ զինվորներն ու հրամանատարները տրամադրված են Կոլչակի դեմ[8]։

Գ. Խախանյանի բրիգադը աղատագրում է նաև Սագիրովո, Լեուզի, Կիսեիկ գյուղերի շրջանը[9]։ 27-րդ դիվիզիայի մասին հուլիսի 6-ին տրված զեկուցագրում նշված է. «...2-րդ և 3-րդ բրիգադների տեղամասում մարտ է գնում, որը հատկապես համառ է Լեուզի գյուղի շրջանում, ուր հակառակորդը մարտի մեջ է մտցրել խոշոր, թարմ ուժեր»[10]։

Երրորդ բրիգադի և սովետական մյուս զորամասերի հարվածներից թշնամին ջախջախվեց և խուճապահար նահանջեց դեպի Զլատոուստ։ Վերջինս ուներ ռազմա-ստրատեգիական հարմար դիրք և հայտնի էր իր ռազմական գործարաններով։ Այդ քաղաքի գրավումը կբացեր Սիբիրի անծայրածիր հարթավայրերը տանող կարևոր ելքերը։ Մի խոսքով ով տիրեր Զլատոուստին, նա էլ կտիրեր ամբողջ Ուրալին։ Ահա թե ինչու Կոլչակը որոշել էր հնարավոր բոլոր միջոցներով իր ձեռքում պահել քաղաքը, որի շուրջը մեծ քանակությամբ զորամասեր էր կենտրոնացրել։

Լավ նախապատրաստությունից հետո 5-րդ բանակի զորամասերը հուլիսի 11-ին անցնում են ընդհանուր հարձակման։ 3-րդ բրիգադի հրամանատար Գ. Խախանյանին հրամայված էր անցնել հարձակման, վճռական հարվածով ջախջախել հակառակորդին և նրա թիկունքի կողմից մտնել Զլատոուստ։ 3-րդ բրիգադի հարձակման ուղղությամբ թշնամին ուներ երկու շարք ամուր դիրքեր[11]։

Գ. Խախանյանի բրիգադի մարտիկները հուլիսի 12-ի գիշերը, դաժան մարտից հետո, գրավում են Կուսինսկի գործարանը և արագ երթով շարժվում դեպի Զլատոուստ։ 27-րդ դիվիզիայի հրամանատար Պավլովի հուլիսի 13-ի զեկուցագրում ասված է. «3-րդ բրիգադի զորամասերը քաղաքին են մոտենում արևմուտքից և հակառակորդին արդեն դուրս են շպրտել Մեդվեդևկա գյուղի շրջանում»[12]։ Նույն օրն էլ՝ հուլիսի 13-ին գրավվեց Զլատոուստը։ Վերջինիս համար մղված մարտերում ցուցաբերած անօրինակ սխրանքների համար 3-րդ բրիգադի 241-րդ և 243-րդ գնդերը Հանրապետության ռազմա-հեղափոխական խորհրդի 1919 թ. օգոստոսի 26-ի հրամանով պարգևատրվեցին պատվավոր Կարմիր դրոշով։

---

6 Նույն տեղում, թ. 10։
7 Նույն տեղում, թ. 14։
8 Նույն տեղում, թ. 13։
9 Նույն տեղում, թ. 16։
10 Նույն տեղում, թ. 42։
11 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 169, թ. 66։
12 Նույն տեղում, թ. 100։

Զլատոուստի գրավումով ճանապարհ բացվեց դեպի Չելյաբինսկ, որտեղ հակառակորդը հյուսիս-արևմտյան ուղղությամբ կենտրոնացրել էր վեց հազարանոց հատուկ հարվածող խումբ, իսկ դեպի հարավ՝ տեղավորել գեներալ Կապելի 10 հազարանոց բանակը[13]։

1919 թ. հուլիսի 22-ին 5-րդ բանակի զորամասերը Չելյաբինսկն ազատագրելու հրաման ստացան։

Անցնելով վճռական հարձակման, սովետական զորամասերը հուլիսի 24-ի առավոտյան ժամը 6-ին գրավեցին Չելյաբինսկը[14]։ Վերջինիս համար մղված մարտերում արտակարգ հերոսություն ցուցաբերեց 3-րդ բրիգադը և նոր ուժով փայլեցին նրա պանծալի հրամանատար Գրիգոր Խախանյանի ռազմական տաղանդն ու ընդունակությունները։ Այդ մարտերի ակտիվ մասնակիցներից մեկի հուշերում կարդում ենք հետևյալը. «Ապիտակներին Չելյաբինսկի մոտ առաջին հարվածը հասցրին 3-րդ բրիգադի գնդերը... Բրիգադի հրամանատարն էր նախկին բանասեր ուսանող, գյուղական դպրոցի ուսուցչի որդի, հին բանակի նախկին կրտսեր սպա, հայ Գ. Դ. Խախանյանը. խոշոր զորահրամանատարի և ռազմական թեորետիկի հատկություններով մի մարդ, խելացի հրամանատար, որը քաղաքացիական պատերազմի տարիներին երեք անգամ պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով։ Այդ ժամանակ ամբողջ կարմիր բանակում կար միայն 31 այդպիսի մարդ»[15]։

Չելյաբինսկի գրավումը պատմական խոշոր նշանակություն ունեցավ։ Կոլչակյան զորամասերի պարտությունը սպիտակգվարդիական հրամանատարության ստրատեգիական պլանի կրախն էր։ Չելյաբինսկի գրավումով ժամկետից շուտ կատարվեց Վ. Ի. Լենինի ցուցումը՝ Ուրալի լրիվ ազատագրումը սպիտակներից։ Ջախջախված թշնամին նահանջեց դեպի Տոբոլ գետը, որի անցման ժամանակ, նույնպես, Գ. Խախանյանը դրսևորեց փորձված ռազմագետի ձիրքեր։ Նրա բրիգադի խնդիրն էր հետախուզություն կատարել գետի երկայնքով և պարզել այն անցնելու պայմանները։ Գ. Խախանյանի անմիջական գլխավորությամբ բրիգադի մարտիկները մեծ ռիսկի դիմելով, ուշի-ուշով ուսումնասիրեցին թշնամու դիրքերի դասավորությունը և պարզեցին անցման հարմար տեղերը։ Մարտական առաջադրանքներից մեկի կատարման ժամանակ Գ. Խախանյանի զորամասերը հանդիպում են հակառակորդի գերակշիռ ուժերի։ Տոբոլի արևելյան ափին տեղի է ունենում ուժեղ մարտ, որտեղ թշնամին ջախջախվում և անկազմակերպ փախուստի է դիմում, հազիվ հասցնելով փրկել Հրետանին[16]։

Ձեռնարկված մի շարք միջոցառումները, թշնամու դասավորության մանրակրկիտ ուսումնասիրությունը և մինչև հոկտեմբերի 13-ը նրան հասցրած մի շարք հարվածները ռեալ հնարավորություններ ստեղծեցին սովետական զորամասերի հակահարձակման և կոլչակյան զորքերի վերջնական ջախջախման համար։

---

13 «Краткая история гражданской войны», государственное изд-во политической литературы, М., 1960 г., стр. 224.

14 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 179, թ. 103։

15 П. Краснопольский, В боях за освобождение Челябинска, газетно-журнальное изд-во, «Челябинский рабочий», Челябинск, 1959 г., стр. 8—9.

16 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2. գ. 174, թ. 101։

Շուտով 5-րդ բանակի զորամասերը Տոբոլն անցնելու հրաման ստացան։ 27-րդ դիվիզիայի հրամանատարի № 0132 հրամանով մարտական առաջադրանք ստացավ նաև 1-ին բրիգադը (Գ. Խախանյանն այդ ժամանակ 1-ին բրիգադի հրամանատարն էր —Ժ. Գ.)[17]։

Հակառակորդը խիտ շարքերով հարձակման է անցնում Խախանյանի բրիգադի 236-րդ գնդի վրա և մարտի սկզբին խիստ նեղում նրան։ Սակայն գունդն անցնելով վճռական գրոհի, ցրում է հակառակորդի ուժերը և փախուստի մատնում նրան։ Մյուս կողմից 1-ին բրիգադի 237-րդ գունդը Զյուզին գյուղի շրջանում ետ է մղում թշնամու 15-րդ և 16-րդ գնդերի բոլոր գրոհները։

Հոկտեմբերի կեսերին սովետական զորամասերը հաջող կերպով գետանցեցին Տոբոլը և ուղղություն վերցրին դեպի Օմսկ։ Հյուսիսից հարձակվում էր Խախանյանի բրիգադը։ Վերջինիս խնդիրն էր ապահովել 5-րդ բանակի ձախ թևը և ամուր կապ պահպանել 3-րդ բանակի աջ թևի զորամասերի հետ։

Մինչև Իրտիշ գետին հասնելը Գ. Խախանյանի բրիգադը մի շարք հարվածներ հասցրեց Օմսկի երկաթուղով նահանջող հակառակորդի թևերին ու թիկունքին, դրանով իսկ հեշտացնելով գետանցը և Օմսկ քաղաքի գրավումը։ Հաշվի չառնելով հակառակորդի թվական գերազանցությունը, Խախանյանի բրիգադը արագ երթով անցավ Իրտիշը և թշնամու զորամասերին հարվածի տակ դրեց թիկունքից։ Այդ մանևրի շնորհիվ կոլչակյան զորամասերը հարվածի տակ ընկան ինչպես ճակատից, այնպես էլ թիկունքից և ստիպված եղան նահանջել անհարմար ճանապարհներով։ Խուճապի մատնված հակառակորդը ջախջախվեց ու ետ շպրտվեց։ Նոյեմբերի 14-ին գրավվեց Օմսկը՝ Կոլչակի «մայրաքաղաքը»։

Հանրապետության ռազմա-հեղափոխական խորհրդի 1920 թ. հունվարի 28-ի № 32 հրամանում ասվում էր, որ Գրիգոր Դավթի Խախանյանը Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվում է այն բանի համար, որ նա «...Օմսկի հետ կապված ռազմական գործողությունների ժամանակաշրջանում տեղի ունեցած մարտերում, հմուտ ու վճռական կերպով ղեկավարեց իրեն վստահված զորամասերը, որի վերջնական արդյունքը եղավ՝ Օմսկ քաղաքի շրջանցումը հյուսիսից և քաղաքի վրա անմիջականորեն հարձակվող 27-րդ հրաձգային դիվիզիայի հարվածային բրիգադի հաջողության ապահովումը։ Քաղաքի օղակումը և զորամասերի դուրս գալը նրա արևելյան շրջան՝ այն պաշտպանող հակառակորդի խմբավորման համար ստեղծեցին միանգամայն մեկուսանալու վտանգ, որը նրան հարկադրեց տենդային նահանջ կատարել։ Մարտի ժամանակ հակառակորդից վերցվեցին մոտ երկու հազար գերի, գնդացիրներ, հրացաններ, գումակներ և շատ այլ ռազմական գույք»։

Օմսկի գրավումից հետո, Գ. Խախանյանի գլխավորած զորամասերն ակտիվ մասնակցություն ունեցան Տատարսկայա, Բարաբինսկ, Կարգատ կայարանների և Կաինսկ ու Նովոնիկոլաևսկ քաղաքների ազատագրմանը։ Սովետական փառապանծ զորքերը 1920 թ. հունվարի 6-ին, Կրասնոյարսկի մոտ ջախջախեցին Կոլչակի զորամասերի վերջին մնացորդներին։ 1920 թ. հունվարին սովետական իշխանություն հաստատվեց նաև Իրկուտսկում, որտեղի ռազմա-հեղափոխական կոմիտեի դատավճռով փետրվարի 7-ին Կոլչակը գնդակահարվեց։

---

17 Տե՛ս նույն տեղում, թ. 47։

Կոլչակին ջախջախելուց հետո Գ. Խախանյանի բրիգադը, մյուս զորամասերի հետ կողք-կողքի, մեծ աշխատանք կատարեց քաղաքացիական կռիվների հետևանքով երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործում։

1920 թ. ապրիլի 6-ին 79-րդ բրիգադին տված հրամանում Գ. Խախանյանը գրում էր. «Կարմիր բանակը պետության մեջ տնտեսական քայքայման դեմ մղվող պայքարին իր մասնակցությամբ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է օրինակ ցույց տա, ապացուցի, որ իսկապես մտադիր է պաշտպանելու սովետական իշխանության միջոցառումները, պետությունը դուրս բերելու ծանր վիճակից, քայքայումից և աղքատությունից»[18]։

Սակայն լեհերի դեմ մղվող պայքարը նոր համալրումներ էր պահանջում։ 1920 թ. հուլիսի 4-ին Մ. Ն. Տուխաչևսկու հրամանատարությամբ Արևմտյան ռազմաճակատի զորքերը ընդհանուր հարձակում էին սկսել։ Եվ ահա 27-րդ դիվիզիայի հրամանատարի հուլիսի 10-ի հրամանը ազդարարեց 79-րդ բրիգադի (որի հրամանատարն էր Դրիգոր Խախանյանը) մուտքը Արևմտյան ռազմաճակատ։ «79-րդ բրիգադի պանծալի հրամանատարին,— ասվում էր այդ հրամանում,— ...Անհապաղ երթի ելնել, բրիգադը փոխադրել այժմ զբաղեցրած շրջաններից և շարունակել շարժվել դեպի Մինսկ տանող խճուղով, նպատակ ունենալով միանալ դիվիզիային՝ Բերեզինա գետն անցնելու համար»[19]։

27-րդ դիվիզիայի զորամասերը, այդ թվում և Խախանյանի բրիգադը, կոտրելով հակառակորդի համառ դիմադրությունը, գետանցեցին Բերեզինան և ուղղություն վերցրին դեպի Մինսկ։

Թշնամին նահանջեց և ամրացավ դեռ 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական զորքերի կողմից կառուցված դիրքերում, որոնց հետ մեծ հույսեր էր կապում լեհական հրամանատարությունը։

Սակայն ոչ գերմանական ամրացված դիրքերը և ոչ էլ հակառակորդի ցույց տված կատաղի դիմադրությունը, չկարողացան կանգնեցնել արևմտյան ռազմաճակատի սովետական զորամասերի սրընթաց առաջխաղացումը, որի հետևանքով էլ ազատագրվեց Մինսկը։ Հուլիսի 14-ին 79-րդ բրիգադին տված հրամանում Գ. Խախանյանը գրում էր. «Մեր փառապանծ 27-րդ դիվիզիայի զորամասերը գրավեցին Մինսկ քաղաքը։ Ինձ վստահված բրիգադի խնդիրն է արագորեն կենտրոնանալ Մինսկ քաղաքի շրջանում»[20]։

Արևմտյան ռազմաճակատի զորքերը գրավելով մի շարք տերիտորիաներ, հասան մինչև Բուգ գետը, որտեղ թշնամին մեծ ամրություններ էր կառուցել և խոշոր ուժեր էր կենտրոնացրել։ Բուգն անցնելու հրաման ստացավ նաև 79-րդ բրիգադը։

Բուգի արևմտյան ափին հակառակորդն ուներ երկու ամրացված պաշտպանության գիծ։ Բոլոր գետանցների ուղղությամբ գնդացիրներ էին դրվել։ Լեհական բանակը նորանոր համալրումներ էր ստանում։

Բուգի բնագիծը պանական Լեհաստանի վերջին հույսն էր։ Մեկը մյուսի ետևից այդտեղ էին փոխադրվում թարմ ուժեր։ Լեհական հրամանատարությունն ամեն ինչ անում էր Վարշավան իր ձեռքում պահելու համար։ Հիմնականում

---

18 ՍԲԿՊԱ, ֆ. 1325, ց. 1, գ. 136, թ. 2։

19 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 236, թ. 3։

20 Նույն տեղում, ֆ. 1325, գ. 139, թ. 9։

դրանով են բացատրվում այն մեծ կորուստները, որ տվեցին սովետական զորամասերը գետանցի ժամանակ։

Խախանյանի բրիգադին հրամայված էր՝ ինչ գնով էլ լինի անցնել Բուգը։ Ուստի, լուրջ նախապատրաստությունից հետո, 79-րդ բրիգադի զորամասերը Ֆ. Խախանյանի հրամանատարությամբ, չնայելով հրետանային ուժեղ գնդակոծությանը, օգոստոսի 4-ին անցնում են վճռական հարձակման և համառ մարտերից հետո գետանցում Բուգը ու հակառակորդին ետ շպրտում դեպի արևմուտք։

Շարունակելով հարձակումը, Խախանյանի բրիգադի զորամասերը օգոստոսի 6-ին կատաղի մարտեր էին մղում հակառակորդի գերազանց ուժերի դեմ Սոկոլով քաղաքի համար։ Ուժեղ պայքար էր ծավալվել քաղաքի արևելյան և հյուսիս-արևելյան ուղղություններով։ Խախանյանի զորամասերին թևերից շրջանցելու հակառակորդի բոլոր փորձերը անհաջողության մատնվեցին[21]։ Օգոստոսի 7-ին քաղաքի արևելյան մասում տեղի ունեցած 12 ժամյա կատաղի սվինամարտից հետո 79-րդ բրիգադի զորամասերը մտնում են քաղաք։ Վերջինիս փողոցներում երկու ժամյա համառ մարտեր են տեղի ունենում, որոնք նույնպես ավարտվում են հակառակորդի պարտությամբ։ 27-րդ դիվիզիայի շտաբի օգոստոսի 7-ի զեկուցագրում ասվում էր. «ըստ լրացուցիչ ստացված զեկույցի, Սոկոլով քաղաքը գրավվել է երկու ժամյա կատաղի մարտից հետո։ Փողոցային մարտերի ժամանակ բնակիչները տանիքներից ու շենքերի պատուհաններից կրակել են մեր զորքերի վրա։ Քաղաքը ետ գրավելու նպատակով հակառակորդի սկսած սրընթաց հարձակումը շարունակվել է մինչև ուշ գիշեր»[22]։

Այսպիսով, քաղաքը ետ գրավելու թշնամու բոլոր փորձերն ապարդյուն են անցնում։ Հակառակորդը ուժեղ հրետանու, զրահագնացքի և հեծելազորի պաշտպանությամբ դանդաղ նահանջում է դեպի արևմուտք։

27-րդ դիվիզիայի զորամասերին տված հրամանում ասվում էր. «Արևելքի մեր վետերանները՝ Բայսարովի, Զլատոուստի, Զելյաբինսկի, Օմսկի, Նովո-Նիկոլաևսկի և Տայգայի հերոսները մարտնչեցին պատմության մեջ հազվագյուտ խիզախությամբ, հաղթահարեցին հակառակորդի համառությունը և գերմարդկային լարվածության գնով ուղի են հարթում լեհական շլյախտայի դեմ մեր պայքարի վերջնական նպատակին հասնելու համար։ Բոլոր պատասխանատու աշխատողները պետք է հիշեն, որ Բուգի բնագծում է որոշվում Լեհաստանի դեմ կամպանիայի ելքը. [illegible] 79-րդ բրիգադի զորամասերը գրավեցին նաև Մեդզեա և Վենգրով շրջանները, իսկ այնուհետև գետանցեցին Լիվեցը։

Օգոստոսի կեսերին Արևմտյան ռազմաճակատի զորամասերը մոտեցան Վարշավային, իսկ Հարավ-արևմտյան ռազմաճակատի զորքերը՝ Լվովին։ Կարմիր բանակի տարած հաղթանակները ծանր կացության մեջ դրեցին լեհական բանակին։ Հեղափոխական շարժումներ էին սկսվել Լեհաստանում։ Կապիտալիստական երկրներում լայն ծավալ էր ընդունել «Ձեռքներդ հեռու սովետական Ռուսաստանից» շարժումը։

Լեհական կառավարությունը խտրություն չէր դնում միջոցների մեջ՝ զբաղարտելու սովետական Ռուսաստանին և նրա վարած արտաքին քաղաքակա-

21 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, թ. 2, գ. 303, թ. 12։
22 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, թ. 2, գ. 303, թ. 19։
23 Նույն տեղում, գ. 236, թ. 77։

նությունը։ Այդ ճանապարհով նրան հաջողվում է գյուղացիության ավելի հետամնաց մասին դրդել կարմիր բանակի դեմ։ Լեհական բանակին հրամայված էր՝ կռվել մինչև վերջին կաթիլ արյունը։ Անտանտի իմպերիալիստները մեծ քանակությամբ զենք ու դինամիտներ ուղարկեցին լեհական բանակին։ Վերջինս չափազանց մոտ գտնվելով իր թիկունքին, նոր համալրումներ էր ստանում։

Մինչդեռ սովետական զորամասերը մի քանի հարյուր կիլոմետրով հեռացել էին իրենց թիկունքից և դրեթե լիովին զրկվել համալրումներ ու զինամթերք ստանալու հնարավորությունից։ Եվ ահա այդպիսի պայմաններում սովետական զորամասերը պետք է վերջին վճռական ճակատամարտը տային հակառակորդի լավ զինված ու հանդերձավորված մեծաթիվ զորքերի դեմ՝ Վարշավայի տակ։

Օգտագործելով վերոհիշյալ առավելությունները, օգոստոսի կեսերին հակառակորդն անցնում է հակահարձակման՝ Արևմտյան ամրոցային ռազմաճակատով։ Սովետական զորամասերն ստիպված էին մարտերով նահանջել։ Հակառակորդն աշխատում էր որքան կարելի է ավելի շատ խորանալ սովետական զորամասերի թիկունքը և շրջապատել նրանց։ Մեծ դժվարություններ էին ըստեղծվել նաև 27-րդ դիվիզիայի համար։ Վերջինիս հրամանատարը ուշացումով տվեց նահանջի հրամանը, երբ լեհերն արդեն անցել էին նրանց թիկունքը և դիվիզիայի զորամասերը հարկադրված էին հակառակորդի դեմ մարտեր մղել իրենց նահանջի ճանապարհին։[24]

Թշնամուն հաջողվում է սովետական զորամասերի թիկունքում գրավել Բելոստոկ քաղաքը և կտրել նրանց նահանջի միակ ճանապարհը։ Մնում էր հանձնվել կամ ճեղքել հակառակորդի ամուր շղթան Բելոստոկում։ Պաշարված զորամասերի հրամանատարությունը նախընտրեց վերջին ճանապարհը։

Կատաղի մարտեր տեղի ունեցան Բելոստոկի համար։ Հակառակորդը համառ դիմադրություն էր ցույց տալիս։ Անկարագրելի հերոսությամբ էին կռվում 27-րդ դիվիզիայի զորամասերը։ Վերջիններիս համառ ու երկարատև ջանքերի շնորհիվ հակառակորդը ջախջախվում ու ետ է շպրտվում Բելոստոկից։ Ճանապարհն ազատվում է։

Բելոստոկի գրավման համար մղված մարտերում ցուցաբերած անձնական հերոսության և հմուտ ղեկավարության համար Գ. Խախանյանը հանրապետության Ռազմա-հեղափոխական խորհրդի 1921 թ. հունվարի 5-ի N 4 հրամանով երկրորդ անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։ Այդ հրամանում ասվում էր. «Շարունակելով պայքարի փառավոր գործը սոցիալիստական հայրենիքի թշնամիների դեմ, 79-րդ բրիգադի զորամասերը մի շարք փայլուն հաղթանակներ տարան արևելյան ռազմաճակատում։ Հետագայում՝ արևմտյան ռազմաճակատում մարտական գործողությունների կարճատև ժամանակամիջոցում վճռական ու անվեհեր ընկեր Խախանյանի ղեկավարած բրիգադը խոշոր հաջողություններ ձեռք բերեց Սոկոլովի, Վենդրովի և Օսովի գրավման ժամանակ։ Վերոհիշյալ բրիգադի հրամանատարը՝ այդ աննկուն հոգու տեր և անձնական արժանիքներով օժտված մարտիկը օգոստոսի 20-ից ներառյալ մինչև 23-ը միշտ գտնվելով վտանգավոր ռազմական տեղամասերում, այսինքն այն ժամանակաշրջանում, երբ մեր զորամասերը ետ էին քաշվում Բուգ գետից,

[24] П. Феодоров, Под красной звездой, государственное изд-во, 1928 г., стр. 102

կարողացավ իր բրիգադի մարտիկների մեջ պահպանել կայունություն մինչև ռազմական գործողությունների վերջը և շահել ճակատամարտը Բելոստոկի տակ։ 79-րդ բրիգադը ապահովելով 3-րդ և 16-րդ բանակների նահանջը՝ արևմուտքից նեղող թշնամուց, ինքն էլ քաղաքի մոտակայքում դանդաղեց վերոհիշյալ բանակների զորամասերի ու զումակների պատճառով։ Այդ ժամանակամիջոցում թշնամին գրավեց Բելոստոկ քաղաքը և այդպիսով կտրեց մեր զորամասերի միակ ճանապարհը։ Ուրիշ զորամասերի փորձերը՝ ճեղքել անցնել քաղաքի միջով, հաջողություն չունեցան։ Եվ ահա այդ ծանր պահին բրիգադի հրամանատար Խախանյանը սեփական նախաձեռնությամբ շրջանցեց հակառակորդին՝ հարվածելով նրան հյուսիս-արևմուտքից։ Սրընթաց գրոհով բրիգադը Բելոստոկի մատույցներում ջախջախեց դիմադրող հակառակորդին և սվինամարտի բռնվեց քաղաքի փողոցներում, ուր տեղական բնակչության մի մասը աջակցություն էր ցույց տալիս հակառակորդին, բերդի վերածելով յուրաքանչյուր տուն։ Բրիգադին հմուտ կերպով ղեկավարելը, անձնական քաջությունը, հոգու կայունությունը և հնարամտությունը, որ ցուցաբերեց կարմիր հերոս ընկ. Խախանյանը, հնարավորություն տվեցին մեր պաշարված զորամասերին ու զումակներին ազատորեն դուրս գալ օղակից։

Այնուհետև, Խախանյանի բրիգադին մարտական դժվարին առաջադրանք է տրվում՝ պաշտպանել բոլոր զորամասերի ու զումակների նահանջը Բելոստոկի վրայով։

Այսպիսով, շրջապատված սովետական զորամասերին ջախջախելու հակառակորդի պլանները փլուզվում են։ Սակայն թշնամուն հաջողվում է սովետական զորամասերի նահանջի ճանապարհին գրավել նաև Վոլկովիսկ քաղաքը։ Այդ մարտում կռվում էր հակառակորդի Պոզնանյան վեց հազարանոց դիվիզիան, որն ուներ 24ծ գնդացիր, 24 թեթև և 4ծ ծանր թնդանոթներ[25]։

Սեպտեմբերի սկզբին 27-րդ դիվիզիայի շտաբում որոշում է կայացվում գրավել Վոլկովիսկ քաղաքը և ջախջախել հակառակորդի կենդանի ուժը։

Այս խնդրի կատարման առաջի բաժին դարձյալ վիճակվում է Խախանյանի բրիգադին։ «Կտրել հակառակորդի նահանջի ճանապարհները՝ հարվածելով նրան հյուսիս-արևմուտքից, այսպիսի հրաման ստացավ բրիգադի հրամանատար ընկ. Խախանյանը։ Իր հանդգնությամբ խելահեղ, բայց ճիշտ հաշվված պլան էր»[26],— գրում է Պ. Ֆյոդորովը։ Վերոհիշյալ խնդրին համապատասխան բրիգադը հարձակման հրաման է ստանում Գ. Խախանյանից։ Վոլկովիսկի համար ահեղ ճակատամարտ է տեղի ունենում։ Համառորեն էին կռվում թե՛ մեկ և թե՛ մյուս կողմը։ Երկար ժամանակ մարտի ելքը չէր պարզվում։ Եվ ահա ամենավճռական պահին Գ. Խախանյանն իր բրիգադով շրջանցում է պոզնանցիներին՝ հյուսիս-արևմուտքից։ Մինչև լեհերը գլխի են ընկնում, Խախանյանի զորամասերն արդեն մարտեր էին մղում քաղաքի արվարձաններում։ Շփոթված թշնամին 79-րդ բրիգադի դեմ նոր զորքեր է ուղարկում, սակայն նրանք նույնպես ջախջախվում ու ետ են շպրտվում։ «Օղակի մեջ առնված պոզնանցիներն իրար ոտնակոխ տալով, զենքերը դեն նետելով, միակ ազատ ճանապարհով փախչում են դեպի Գայնովկա»[27]։

---

25 П. Федоров. Под красной звездой, государственное изд-во, 1928 г., стр. 103.
26 Там же.
27 Там же.

լեհերի առաջխաղացումը դեպի արևելք շուտով կանգնեցվում է։ Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին սովետական զորամասերը մի շարք հարվածներ են հասցնում հակառակորդին և լեհական կառավարությանն ստիպում՝ հաշտություն խնդրելու։ «Պանծալի կարմիր գնդերի հրամանատարներ, կոմիսարներ և կարմիրբանակայիններ,— գրում էր Խախանյանը հրամաններից մեկում,— Ձեր խիզախությունից և հաստատակամությունից է կախված լեհաստանի հետ հաշտություն կնքելու հնարավորությունը։ Կաղանի, Բայսարովի, Չլատոուստի, Օմսկի, Տայգայի, Բուգի և Վոլկովիսկի հերոսներ։ Ձեր հարվածներին չդիմացան թշնամու ընտիր զորամասերը։ Ուժեղացրեք այդ հարվածները, այդ է պահանջում հեղափոխությունը»[28]։

1920 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մղած մարտերում ևս Գ. Խախանյանը դրսևորեց տաղանդավոր հրամանատարի ընդունակություններ, ցուցաբերեց անձնական մեծ քաջություն, որի համար ՀՌՀԽ-ի 1921 թ. դեկտեմբերի 31-ի № 535 հրամանով նա 3-րդ անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։ Այդ հրամանում ասված էր. «79-րդ բրիգադի նախկին հրամանատար ընկ. Գրիգոր Դավթի Տեր-Խախանյանը երրորդ անգամ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվում է այն բանի համար, որ 1920 թվականի օգոստոսին և սեպտեմբերին Վարշավայի տակ տեղի ունեցած մարտերի ժամանակ ղեկավարելով բրիգադի զորամասերը, դրսևորել է ռազմական խիզախություն, արիություն և քաջություն։ Լենդսմին, անձամբ մասնակցելով չպարզված իրադրության մեջ և խիստ ծանր պայմաններում տեղի ունեցած մարտական գործողություններին, բրիգադի հետ միասին ճեղքել է թշնամու շրջապատման օղակը, բրիգադը դուրս բերելով կանոնավոր վիճակում»։

1921 թվականի գարնանը 79-րդ բրիգադը ակտիվ մասնակցություն ունեցավ Կրոնշտադտի խռովության ճնշմանը։ Վերլուծելով Կրոնշտադտի իրադարձությունները և դրանց հետ կապված՝ երկրում տիրող իրադրությունը, Վ. Ի. Լենինը նշել է, որ «Այդ մանրբուրժուական հակահեղափոխությունն անկասկած ավելի վտանգավոր է, քան Դենիկինը, Յուդենիչը և Կոլչակը միասին վերցրած»[29]։ Ֆեդկոյի և Դիբենկոյի զորամասերի հետ կողք-կողքի հերոսաբար էին կռվում նաև Խախանյանի բրիգադի մարտիկները։ Կ. Ե. Վորոշիլովի վկայությամբ «Հսկայական դժվարություններ էին ծառացած Կրոնշտադտը դրոհող հերոսների առջև։ Գրոհել Կրոնշտադտը՝ նշանակում էր տեղատարափ կրակի տակ ընթանալ գարնանային բարակ սառույցի վրայով։ Գրոհել Կրոնշտադտը՝ նշանակում էր ճեղքել բետոնապատ ամրությունների ուժեղ շղթան... Բայց ոչ սառցաջուրը, ոչ խռովարարների սպանիչ կրակը չկանգնեցրին կարմիր հերոսներին»[30]։

Գրոհը Կրոնշտադտի ամրությունների վրա սկսվում է 1921 թվականի մարտի 17-ին։ Դիբենկոյի հավաքական դիվիզիայի ձախ թևում շարժվում էին 79-րդ բրիգադի զորամասերը, որոնք պետք է նախնական գրոհով գրավեին հարավային մասում գտնվող մի շարք ամրություններ, իսկ այնուհետև միայն հարված հասցնեին ամրոցին[31]։ «Առանց Կրոնշտադտը գրավելու մայր ցամաք վե-

---

28 ՍԲԿՊԱ, ֆ. 1325, ց. 1, գ. 142, թ. 11։

29 «Нева», 1966 г., № 4, стр. 108.

30 «Наши земляки—герои гражданской войны», Кишинев, 1964 г., стр. 50.

31 «Военно-исторический журнал», 1961 г., № 3, стр. 31.

բաղառնալու մասին մոռանալ»-,— գրում էր Գ. Խախանյանը հրամաններից մեկում։

Կոտրելով թշնամու դիմադրությունը սովետական զորամասերը գրավում են Կրոնշտադտը։ Քաղաքի փողոցներում կատաղի մարտեր են տեղի ունենում, որտեղ մյուս զորամասերի թվում հերոսաբար էին կռվում նաև Խախանյանի մարտիկները։ Կռվի ամենաթեժ տեղամասում կարելի էր նկատել կարմիր հրամանատար Ռ. Խախանյանին։

Այդ մարտերում ցուցաբերած անօրինակ հերոսության համար ՀՍՀԽ-ի 1921 թ. դեկտեմբերի 12-ի № 343 հրամանով Գ. Խախանյանը պարգևատրվում է հեղափոխական պատվավոր զենքով։

«Հեղափոխական պատվավոր զենքով,— ասվում էր այդ հրամանում,— պարգևատրվում է Օմսկյան 27-րդ հրաձգային դիվիզիայի 79-րդ բրիգադի հրամանատար ընկ. Գրիգոր Դավթի Տեր-Խախանյանը այն բանի համար, որ 1921 թվականի մարտի 17-ին Կրոնշտադտի ամրոցը գրոհելիս, անմիջականորեն ղեկավարելով բրիգադի գրոհող շարասյուները... հմուտ ղեկավարությամբ նպաստել է մեր գրոհների հաջողությանը։ Անձամբ նրա ղեկավարությամբ բրիգադը... գրավեց հարավային երկու ամրություններ և հարավ-արևմուտքից առաջինը՝ոտք դրեց Կոտլին կղզին ու Կրոնշտադտ քաղաքը, հակառակորդի համար ստեղծելով դեպի Ֆինլանդիա նահանջի ճանապարհները կտրելու վտանգ։ Իր վրա հրավիրելով հակառակորդի բացառիկ ուշադրությունը և նրան հեռացնելով մյուս տեղամասերից, բրիգադը մնացած զորամասերին հնարավորություն տվեց հաջողությամբ կատարելու իրենց մարտական խնդիրները»։

Գ. Խախանյանի բրիգադը հաղթական երթով անցավ հազարավոր կիլոմետր տարածություն և փառքով պսակեց իրեն ռազմական ամենաբարդ գործողությունների ժամանակ՝ ինչպիսիք էին Զլատոուստի, Զելյաբինսկի, Օմսկի, Բելոստոկի, Վոլկովիսկի և Կրոնշտադտի գրավումը։ Արխիվային փաստաթղթերից մեկում Խախանյանի բրիգադի մասին ասված է, որ «բրիգադի դիտակից, խիզախ մարտիկները, հիրավի, արժանի են անչափ մեծ հարգանքի»[33]։

Քաղաքացիական կռիվների ավարտումից հետո Գ. Խախանյանը նշանակվում է 27-րդ Օմսկյան կարմրադրոշ դիվիզիայի հրամանատար։

Այնուհետև, ռազմական բարձր կրթություն ստանալով, նա ստանձնում է մի շարք պատասխանատու պաշտոններ. 1927 թվականին նշանակվում է 19-րդ կորպուսի հրամանատար Հեռավոր արևելքում, իսկ երկու տարի անց՝ նոր ձևավորվող Հեռավոր-արևելյան հատուկ կարմրադրոշ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ։ 1930 թվականին Գ. Խախանյանը հրավիրվում է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում դասավանդելու։ Այնուհետև նա նշանակվում է Ուկրաինայի ռազմական օկրուգի բաղվարչության պետ։

Ամենուր Գ. Խախանյանը հանդես է բերում ակտիվ ու հայրենանվեր աշխատանք և պատվով է կատարում իր ինտերնացիոնալ պարտքը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ։ Նա իր աշխատություններով, բազմաթիվ առաջարկներով և անձնական մասնակցությամբ մեծ ներդրում ունի սովետական ռազմական արվեստի զարգացման գործում։

1937 թ. Խախանյանը ուժերի ծաղկման շրջանում զոհ գնաց կամայականությանը։

32 ՍԲԿՊԱ, ֆ. 1324, ց. 2, գ. 33, թ. 60։
33 ՍԲԿՊԱ, ֆ. 1325, ց. 1, գ. 185, թ. 17։